

Երևանի պետական համալսարանում գործող
Բարձրագույն որակավորման կոմիտեի (ԲՈԿ)
իրավագիտության 001 մասնագիտական խորհրդին
հասցե՝ ՀՀ 0025, Երևան, Ալեք Մանուկյան փողոց 1

Կ Ա Ր Ծ Ի Ք

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՍԱԽՈՍԻ՝

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ ԱՐՄԵՆ ՀԱՅԿՅԱՆՑԻ

ԺԲ.00.03- Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային
մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք)
մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու
համար ներկայացված Դավիթ Արմենի Օհանյանի «Քաղաքացիաիրավական պայմանագրի
մեկնաբանման արդի հիմնախնդիրները» թեմայով ատենախոսության և սեղմագրի վերաբերյալ

Ատենախոսական աշխատանքը նվիրված է հայրենական ցիվիլիստիկայում
գիտական ամփոփ մակարդակով սակավ ուսումնասիրված հարցերի շրջանակի՝
քաղաքացիա-իրավական պայմանագրերի մեկնաբանման հիմնախնդիրներին:
Պայմանագրերի մեկնաբանման պրոցեսում միշտ էլ առաջ են գալիս
տարաձայնություններ, որոնք որպես կանոն կապված են լինում ոչ միայն
պայմանագրի կողմերի տարբեր իրավաբանական դրույթների, այլև գիտական
տարակարծությունների հետ: Եվ այս երկու հանգամանքները փոխկապակցված են
միմյանց հետ: Պայմանագրերի մեկնաբանման հարցերը լավագույնս չեն
լուսաբանվել քաղաքացիական շրջանառությունում, միննույն ժամանակ
հայրենական գիտությունը շատ չի կենտրոնացել այս ուղղվածության
հիմնախնդիրների ուսումնասիրման ուղղությամբ: Հայրենական դոկտրինայում

այս բացը լրացնելու համար հիմնականում ուսումնասիրվել են օտարերկրյա գիտական աշխատանքներ: Խնդրո առարկայի հանդեպ գիտության իներտ մոտեցումն իր հետևանքներն է թողել օրենսդրության մեջ և պրակտիկայում: Այսպես, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը պայմանագրերի մեկնաբանման բոլոր հնարավոր դեպքերի համար մեկ հոդված է նախատեսում, որով առաջարկվում է միայն մեկ մոտեցում, այն է՝ *<<Պայմանագրի պայմանները մեկնաբանելիս՝ դատարանը պետք է էլնի նրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությունից: Պայմանագրի պայմանի տառացի նշանակությունը պարզ չլինելու դեպքում այն սահմանվում է պայմանագրի մյուս պայմանների և պայմանագրի ամբողջական իմաստի հետ համադրելու միջոցով>>*: Նույնպիսին է վիճակը պրակտիկայում, երբ բարձրագույն դատական ատյանի՝ Վճռաբեկ դատարանի որոշմամբ սահմանվել է մեկնաբանման կանոնների հիերարխիա, որի հիմքում ընկած է պայմանագրի նույն՝ տառացի մեկնաբանումը: Պայմանագրի մեկնաբանման հարցի առնչությամբ նման պարզունակ մոտեցումը բնորոշ է քաղաքացիական պարզունակ շրջանառությանը, սակայն այն պայմաններում, երբ մեր տնտեսությունն ինտեգրվում է համաշխարհային տնտեսությանը, և համապատասխանորեն էլ մեր օրենսդրությունը պետք է ներդաշնակվի օտարերկրյա և միջազգային օրենսդրությանը, որոնցում պայմանագրերի մեկնաբանման հարցում ընդունված են և կիրառվում են իրավական նոր մեխանիզմներ, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով ներառվող՝ պարզունակ իրավադրույթը պետք է համարել ոչբավարար և վերանայման ենթակա: Այստեղ իր ծանրակշիռ խոսքն ունի ասելու գիտությունը, քանզի հենց գիտական հիմնավորումներն են բացում դեպի օրենսդրական բարեփոխումներ տանող ճանապարհը, որին էլ պետք է հաջորդի պրակտիկայի վրա համապատասխան ներգործությունն ու զարգացումը: Նշված ասպեկտով կատարված ատենախոսական աշխատանքը լուրջ ներդրում կարող է լինել հայրենական գիտության, ներառյալ օրենսդրության զարգացման և նորարարական

պրակտիկայի արմատավորման ուղղությամբ: Վերջին հանգամանքով էլ պայմանավորված է ատենախոսական աշխատանքի գիտական նորույթը և արդիականությունը:

Ատենախոսը գիտական հետազոտության հիմնական նպատակ է սահմանել՝ քաղաքացիա-իրավական պայմանագրի մեկնաբանման գիտականորեն հիմնավորված ընդհանուր մոտեցման ձևավորումը, որին հետևել է այդ նպատակին հասնելու համար անհրաժեշտ խնդիրների առաջադրումը: Առաջադրված՝ թվով 6 խնդիրների գիտական լուծման միջոցով ատենախոսին, ըստ էության, հաջողվել է հասնել սահմանված նպատակին, ինչի մասին է վկայում արված գիտական եզրահանգումների և օրենսդրական բնույթի առաջարկությունների առատությունը: Աներկբա է ատենախոսի գիտական՝ նպատակասլացությունը, ստեղծագործականությունը, նախաձեռնողականությունը և համարձակությունը, որոնք լրացուցիչ համոզականություն են հաղորդում ատենախոսական ուսումնասիրությանը:

Ատենախոսական աշխատանքը կատարվել է այնպիսի բովանդակային համակարգայնությամբ, տրամաբանությամբ և կառուցվածքով, որը հնարավորություն է տալիս գիտական խնդիրներին և դրանց լուծումներին ծանոթանալ ընդհանուրից հատուկին և վերացականից կոնկրետին գնացող ճանաչողական անցումներով:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, ութ պարագրաֆներից, եզրակացությունից, ինչպես նաև օգտագործված գրականության ցանկից:

Ատենախոսության մանրամասն ուսումնասիրությունը վկայում է, որ հեղինակը կատարել է թեմային նվիրված համալիր և ավարտուն աշխատանք՝ օգտագործելով ընդհանուր գիտական մեթոդներ, մասնավորապես՝ ճանաչողության դիալեկտիկական մեթոդը, ինդուկցիայի, դեդուկցիայի, անալիզի, սինթեզի, ձևական-իրավական, համեմատական-իրավական և գիտական այլ

մեթոդներ: Բացի այդ հեղինակի կողմից ներկայացված նկատառումներն ու դիտարկումները շատ արժեքավոր են, և հաստատապես կարելի է փաստել, որ հեղինակը կարողացել է ներկայացնել գիտական պատշաճ մակարդակ ունեցող աշխատանք:

Աշխատանքի հիմնական դրույթները արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված թվով 7 գիտական հոդվածներում, ինչպես նաև սեղմագրում: Ատենախոսության և սեղմագրի ծավալն ու ձևավորումը համապատասխանում են ԲՈԿ-ի կողմից սահմանված կանոններին:

Միևնույն ժամանակ, ինչպես ցանկացած աշխատանք, այնպես էլ ներկայացված ատենախոսությունը, գերծ չէ վիճելի դրույթներից և որոշ թերություններից, որոնք կայանում են հետևյալում.

1. Պաշտպանության ներկայացվող առաջին դրույթն իր ձևակերպումներով և վերլուծականությամբ ակնհայտ պարզունակություն ունի, երբ ատենախոսը վկայակոչելով իրավաբանական գրականության մեջ քննարկվող երկու՝ *կամքի և կամահայտնության տեսությունները*՝ առաջարկում է մեկին մյուսի նկատմամբ առավելություն չտալ, այլ ընտրել այնպիսի մոտեցում, որն իր մեջ կհամադրի այս երկու տեսությունների դրական կողմերը և կհավասարակշռի դրանց: Այս կապակցությամբ գրեթե նույնական ձևակերպումներ ենք տեսնում աշխատանքի Եզրակացությունում: Պաշտպանության ներկայացվող դրույթից որևէ կերպ պարզ չի դառնում, թե այդ որ մոտեցումն է, որը կարող էր համադրել հիշյալ տեսությունները և հավասարակշռել այդպիսիք: Հեղինակն այստեղ պետք է հիշատակեր նման՝ առնվազն գոնե մեկ տարբերակ, սակայն հեղինակն իրականում նոր լուծում ունենալու բարի ցանկությունից առաջ չի գնացել: Ատենախոսին առաջարկում ենք այս կապակցությամբ ավելի առարկայական պարզաբանումներ ներկայացնել ատենախոսական պաշտպանության ընթացքում:

2. Պաշտպանության ներկայացվող 2-րդ դրույթի շրջանակներում ատենախոսն առաջարկում է *«օրենսդրական մակարդակով պայմանագրի*

մեկնաբանման ժամանակ արգելել լեզվաբանական փորձաքննությունների իրականացումը, իսկ լեզվաբանական այլ հնարքների կիրառումը դատարանի համար կարող է ունենալ միայն ուղղորդող նշանակություն» (ցիտման ավարտ): Նախ ձևակերպումից այն տպավորությունն է, որ առաջին դրույթը՝ «<օրենսդրորեն արգելել լեզվաբանական փորձաքննությունները>> հակասում է երկրորդ դրույթին՝ «<լեզվաբանական այլ հնարքները դատարանի համար ուղղորդիչ նշանակություն ունեն>>: Արդյոք լեզվաբանական փորձաքննություն չի կիրառվում, երբ լեզվաբանական հնարքներ են կիրառված, եթե արգելվում են լեզվաբանական փորձաքննությունները, ապա էլ ինչ լեզվաբանական հնարքներ կարող են թույլատրելի լինել և ուղղորդիչ լինել դատարանի համար: Այստեղ եթե ոչ իմաստային, ապա գոնե տեքստային կամ ձևակերպման անորոշության խնդիր կա, որը լրացուցիչ պարզաբանման կարիք ունի:

Բացի այդ, ատենախոսն առաջարկում է օրենսդրորեն նոր պահանջներ նախատեսել, սակայն չի հստակեցնում, թե օրենսդրական որ ակտում կատարել այդպիսիք, և ինչպիսի կոնկրետ ձևակերպում պետք է ունենան այս առաջարկությանը համահունչ՝ «<ապագա օրենսդրական դրույթները>>:

3. Դժվար է համաձայնվել ատենախոսի այն ձևակերպման հետ, որ «<Contra proferentem>> մեկնաբանման կանոնը ներպետական իրավունքին և դատական պրակտիկային ծանոթ չէ (էջ 14): «<Contra proferentem>> մեկնաբանման սկզբունքի մասին խոսվում է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի կողմից տպագրության երաշխավորված՝ «Միջազգային մասնավոր իրավունք» բուհական դասագրքում, այդ հարցը ներառված է քննական հարցաշարում և արդեն երկրորդ տասնամյակն է, ինչ այդ ուսումնական ծրագիրն ավարտող ուսանողներին քաջ հայտնի է մեկնաբանման «<Contra proferentem>> կանոնը, որի իմացությամբ էլ նրանք գնում են պրակտիկա և կառուցում այդ պրակտիկան: Բացի այդ, «<Contra proferentem>> մեկնաբանման կանոնը նախատեսվում է Միջազգային առևտրային պայմանագրերի սկզբունքներում, ընդունված 1994թ-ին Հռոմի Միջազգային

մասնավոր իրավունքի ինստիտուտի կողմից, այդ աղբյուրը համարվում է միջազգային գործարար շրջանառության սովորույթ, որը սանկցիավորված է նաև մեր օրենսդրությամբ՝ ի դեմս ՀՀ քաղ.օր. 7-րդ հոդվածի, ինչը նշանակում է, որ մեր պայմանագրային շրջանառության նկատմամբ հիշատակված Սկզբունքները հավասարապես կիրառելի աղբյուր է: Ասվածը նշանակում է, որ «*Contra proferentem*» մեկնաբանման կանոնն ըստ էության ծանոթ է և իրավաբանորեն ընդունված է մեր պայմանագրային շրջանառությունում: Նույնիսկ եթե այդ սկզբունքը չնախատեսվի էլ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, ինչպես առաջարկում է ատենախոսը, այդ սկզբունքն արդեն իսկ թույլատրված է ՀՀ օրենսդրությամբ: Ուրիշ բան, որ այդ սկզբունքն ավելի լայնորեն կիրառելու հարցում լրացուցիչ և լայնածավալ իրազեկման անհրաժեշտություն կա: Ասվածի լույսի ներքո՝ ատենախոսի կողմից պաշտպանության ներկայացված դրույթը՝ ՀՀ օրենսդրությամբ նախատեսել «մեզ համար անհայտ՝ *Contra proferentem* կանոնը», ըստ էության՝ գիտական նորույթ չի կրում իր մեջ:

Այս ամենով հանդերձ պետք է նշել, որ ներկայացված նկատառումները չեն արժեզրկում, ընդհանուր առմամբ, հաջողված ատենախոսությունը և պայմանավորված են աշխատանքն առավել կատարյալ տեսնելու ցանկությամբ:

Դավիթ Օհանյանի ատենախոսությունը բնութագրվում է ներքին ամբողջականությամբ, հանդիսանում է արդիական, տեսական և գործնական առումով՝ արժեքավոր: Այն շարադրված է գրագետ հայերենով, աչքի է ընկնում ինքնուրույն ձևակերպումների և սեփական դատողությունների առատությամբ:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Դավիթ Արմենի Օհանյանի «Քաղաքացիաիրավական պայմանագրի մեկնաբանման արդի հիմնախնդիրները» թեմայով ատենախոսությունն իրենից ներկայացնում է համակարգային, համալիր և ավարտուն հետազոտություն:

Ընդդիմախոսության ներկայացված ատենախոսությունը համապատասխանում է ԺԲ.00.03 «Մասնավոր իրավունք» մասնագիտությանը

(քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք), բավարարում է ՀՀ կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է «Իրավաբանական գիտությունների թեկնածու» գիտական աստիճանի շնորհման:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ՝



Ա. ՀԱՅԿՅԱՆՑ

05.11.2021թ.

«Ա. Հայկյանցի ստորագրության իսկությունը հաստատում եմ»
ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԻ ՏԵՂԱԿԱԼ
ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ՝

Հ. ԽԱԶԻԿՅԱՆ

